

3792

Յ Պ Ա Գ Ի Ք

Եկեղեաց Միութեան

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ | ՆՈՅԵՄԲԵՐ, 1916.

ՆԻՇԻ ԵՈՐՔ



ՆՊԱՏԱԿ

Պատերազմի պատճառաւ Երդնկայէն
ՏԵՂԱԶԱՆՈՒԱԾ ԵՒ ԻՒՐ ՇՐՋԱՆԻՆ ՄԷԶ ԳՏՆՈՒԱԾ
Երդնկայիներաւն նիւթապէս և բարոյապէս
անխոտիր օգնել:

281.6

Ծ - 89

281.6
օ-89

Մ Պ Ա Գ Ի Բ Եկեղեց Միութեան

ՀԱՅԱՍՏՈՒՄ 1 ՆՈՅԵՄԲԵՐ, 1916

ՆԻՌԻ ԵՈՐՔ



ՆՊԱՏԱԿ

Պատերազմի պատճառու Երգնկայէն տեղահան-
ուած եւ իւր չըջանին մէջ գտնուած Երգնկացիներուն
նիւթապէս եւ բարոյապէս անխորիր օդնել:

Ծ Բ Ա Գ Ի Ռ

ԵԿԵՂԵԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ՅՕԴ-ԱԽԱՆ

ԱՆՈՒՆ

ԵԿԵՂԵԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. Բ.

ՆՊԱՏԱԿ

Պատերազմի պատճառաւ Երզնկայէն տեղահանուած եւ իւր չըջանին մէջ գտնուած Երզնկացիներուն նիւթապէս եւ բարոյապէս անխտիր օդնել:

ՅՕԴ. Գ.

ՀԱՍՈՅԹԻ ՄԻԶՈՑՆԵՐ

Անդամավճարներէ զատ Ընկերութեան հասոյթի աղբիւրները պիտի ըլլան հանգանակութիւններ, ներկայացումներ, հանդէսներ, վիճակահանութիւններ, եւ յլն.:

ՅՕԴ. Դ.

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Առանց տարիքի եւ սեռի խտրութեան ամէն ոք կրնայ անդամակցիլ:

2001



61977-Ա

2010

869. Կ

ՅՕԴ. Ե.

ԱՆԴԱՄԱՎՃԱՐ

Իւրաքանչիւր անդամ պարտաւոր է վճարել ամսական մէկ Տօլար :

ՅՕԴ. Զ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԶԵԽԸ

Հատ. 1.՝ Վարչութիւնը կ'ընտրուի անդամական ժողովի մէջ, անդամներու թուին $\frac{1}{3}$ -ի ներկայութեամբ :

Հատ. 2.՝ Ներկաներու եւ բացակայ գտնուող անդամներու գրաւոր քուէի առաւելութեամբ :

Հատ. 3.՝ Քուէարկութիւնը գաղտնի պէտք է ըլլայ :

Հատ. 4.՝ Պայմանաւ որ 1 շաբաթ առաջ վարչութեան կողմանէ անդամներու լուր տրուի ժողովին նպատակը, որմէ յետոյ բացակայ ընկերները բողոքելու իրաւունքը չը պիտի ունենան :

ՅՕԴ. Է.

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հատ. 1.՝ Վարչութիւնը կը բաղկանայ հինգ անձերէ, Ատենապետ, Ատենապիր, Գանձապահ եւ երկու խորհրդատու անդամներէ :

Հատ. 2.՝ Վարչական մարմնոյն պաշտօնավարութեան ըրչանը պիտի ըլլայ վեց ամիս. յաւարտորուն նոր ընտրութիւն պիտի ըլլայ, նախկին վարչական մարմնոյն անդամները վերընտրելի ըլլալով :

ՅՕԴ. Ը.

ՊԱՇՏՈՆ ԵՒ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հատ. 1.՝ Պաշտօնական բոլոր գրութիւնները վարչական խորհրդակցական ժողովին կանցնին, բայց երբ կը ներկայանան այնպիսի թղթակցութիւններ որոնց պատասխաննելը ստիպողական է, առանց վարչութեան գումարման սպասելու Ատենապետ եւ Ատենապիր խորհրդակցութեամբ իսկոյն կը զատասիաննեն :

Բնկերութեան բոլոր թղթակցութիւնները պարտել ատենապետին եւ ատենապպրին ստորագրութիւնը ընկերութեան կնիքով վաւերացուած :

Բնկերութեանս կնիքը կը մնայ ատենապպրին քով :

Գանձապետին պարտականութիւնն է գանձել ամսավճարները ամսէ ամիս իր ստորագրութիւնը կրող ընկալագրեր յանձնելով վճարող անդամներուն :

Հատ. 2.՝ Իւրաքանչիւր վեց ամիսը անդամ մը վարչութիւնը իւր գործառնութիւններուն ընդհ. հաշուեկչուր պիտի ներկայացնէ անդամական ժողովին :

Հաստ. 3. — Վարչութիւնը կ'ունենայ իւր կանոնաւոր ժողովները, զորս արձանադրելու են արձանագրութեան տեսարին մէջ:

Հաստ. 4. — Մէկ կամ առ առաւելն 1½ ամիսը անդամ մը ընդհամական ժողով կը գումարէ:

Հաստ. 5. — Վարչական անդամներու թիւը ուեւիցէ կերպով եթէ երեք պակսի, անդամական ժողովի մէջ դաշտնի կամ յայտնի քուէարկութեամբ անդամներէն մէկը կ'ընտրուի:

ՅՈՒ. Թ.

ԳՐԱՄՄԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹԻՒՆ

Գանձապահը պարտաւոր է իւր հաւաքած դրամին միայն 25-30 տօլարը իւր քով պահելով մնացեալը ժիութեանս կողմանէ ընտրուած 3 անձանց անունով եւ Միութեանս կնիքով 48 ժամուայ մէջ ձգելու է դրամատունը:

ՅՈՒ. Ժ.

ՄԱՍՆԱՋԻՂԵՐ

Նիւ Եորքէ զուրս ամէն տեղ հինգ անձինք մասնածիւղ մը կազմելու իրաւունք ունին, որոնք իրենց մէջ կ'ընտրեն երեք անձերէ բաղկացեալ դիւան մը, եթէ 11 անձերէ աւելի է մասնածիւղը 5 անձերէ բաղկացեալ Գործադիր Մարմին մը կ'ընտրեն իրենց մէջ, որ մասնածիւղի դործերը կը կառավարէ:

Հաստ. 2. — Կազմուած մասնածիւղի իրարու հետ համաձայնելով կեղրոնական Մարմին մը կ'ընտրեն

Համերաշխարար դործելու համար ընկերութեան նպատակին չուրջ:

ՅՈՒ. ԺԱ.

ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ

Ծրագրին բոլոր յօդուածները, բարեփոխելի են բացի իւր նպատակէն:

ՅՈՒ. ԺԲ.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հաստ. 1. — Իւրաքանչիւր անդամ պարտաւոր է յարգել այս ծրագրին բոլոր կանոնները եւ աշխատիլ ամէն կերպով ընկերութեանս օգտակար ըլլալ:

Հաստ. 2. — Ընկերութեանս այն անդամը որ առանց բանաւոր պատճառի երեք ամիս անդամական ժողովէ բացակայ կ'ըլլայ եւ ոչ ալ իւր անդամավճարը կուտայ, քուէ տալու իրաւունքն կը զրկուի:

ՅՈՒ. ԺԳ.

ԿԱԶՄԱԿՈՒԾՈՒՄ

Միութիւնս կանդուն կը մնայ մինչեւ այն ատեն երբ տակաւին առնուազն եօթը անդամներ կուգեն շարունակել: Երբ այդ թիւէն պակս կ'ըլլայ ընկերութիւնս լուծուած կը համարուի:

Հաստ. 2. — Ընկերութեանս լուծման պարագային իւր բոլոր ունեցած պատրաստ դրամը եւ գոյքերը իւր նպատակին պիտի յատկացուի:

Դասական գրադարձ ԱՐՁՈՒԹԻՒՆ
Ենթակա Բիблиոթեկա
Նիւ Եորք, 1916, նոյ. 1



3792



10/9

3676